ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐԱՅԻՆ

Օ Ր Ե Ն Ս Գ Ի Ր Ք

(Ընդունված է Հայաստանի Հանրապետության Ազգային
ժողովի կողմից 2002 թվականի հունիսի 4-ին)

Հոդված 16. **Ջրի ազգային ծրագիրը**

Ջրի ազգային ծրագիրը կառավարության ներկայացմամբ հաստատում է Ազգային ժողովը՝ համապատասխան օրենքի ընդունմամբ: Ջրի ազգային ծրագիրը ներառում է՝

1) ազգային ջրային պաշարի և ջրային ռեսուրսների ծավալներն ըստ ջրային ռեսուրսների,

2) բնագավառի պահպանման և զարգացման հիմնական խնդիրները.

3) պետական նշանակության ջրային համակարգերի որոշման չափանիշները և այդ համակարգերի ցանկը.

4) ջրային ռեսուրսների կառավարման արդիականացման միջոցառումների նկարագիրը.

6) ջրօգտագործման թույլտվության վճարի (ջրօգտագործման վճարի) առավելագույն և նվազագույն չափերի, ներառյալ՝ ջրային ռեսուրսների արդյունահանման, հետ վերադարձման և բնապահպանական վճարների դրույքաչափերի սահմանումը.

7) ջրի ազգային ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական պահանջները և ֆինանսավորման առաջարկվող աղբյուրները.

8) հաղորդում՝ ջրային հարաբերություններում սույն օրենսգրքի կատարումն ապահովող իրավական և նորմատիվ ակտերի ընդունման ու կատարման, ինչպես նաև առաջարկություններ դրանց կատարելագործման վերաբերյալ.

10) այլ պայմաններ, որոնք անհրաժեշտ են ջրի ազգային ծրագրի իրականացման համար:

Ջրի ազգային ծրագիրը նկարագրում է կառավարության հաստատած ջրավազանային կառավարման տարածքների՝

1) սահմանները, առկա ջրերի քանակը, որակը և ջրային ռեսուրսների դասակարգումը.

2) ջրային համակարգերի դասակարգումը.

3) ազգային ջրային պաշարի մեծությունները, դրա պահպանմանը և ավելացմանն ուղղված միջոցառումները.

4) ոլորտների ջրօգտագործումը և դրանց համալիր ազդեցության գնահատականը ջրային ռեսուրսների բաշխման վրա.

5) ջրերի նկատմամբ պահանջարկը՝ ըստ գերակայությունների.

6) ջրի պահպանության և կառավարման ընթացիկ գործողությունների արդյունավետության չափանիշները, ջրային ռեսուրսների անվտանգ էկոլոգիական վիճակի պահպանման և ինքնավերականգնման ընդունակության ապահովման նպատակով սահմանված էկոլոգիական թողքերի մեծությունները և ջրերի անվերադարձ վերցման սահմանային թույլատրելի ծավալները.

7) ջրային ռեսուրսների ամբարման, բաշխման և օգտագործման ռազմավարությունը.

8) ջրային ռեսուրսների մոնիտորինգի բարելավման և աղտոտման կանխարգելմանն ուղղված միջոցառումները, ներառյալ՝ արդիական տեխնոլոգիաների կիրառումը.

9) ջրերի ստանդարտները.

10) ծրագրի իրականացման համար պետական կառավարման մարմինների կողմից իրականացվող գործողությունների նկարագրությունը և դրանց համակարգումը.

11) ծրագրի իրականացման հետ կապված ծախսերը և ստացվելիք դրամամուտքերը.

12) հասարակության իրազեկության ապահովման մեխանիզմները.

13) հատուկ պահպանվող ավազանային տարածքների կամ դրանց մասի ցանկը, որոնց մակերևութային և (կամ) ստորերկրյա ջրերի կամ դրանցով պայմանավորված կենդանական և

Deleted: ինչպես նաև այն միջոցառումները, որոնք ուղղված են ազգային ջրային պաշարի պահպանմանը և ավելացմանը.¶

Deleted: 5) նախատեսված միջոցառումների նկարագիրը, ծավալները և իրականացման ժամանակացույցը.¶

Deleted: 9) նախատեսված միջոցառումների իրականացման առաջնայնությունները.¶

(կամ) բուսական աշխարհի համար պահանջվում է պահպանության հատուկ համակարգի կիրառում.

14) ջրային ավազաններում արտակարգ էկոլոգիական իրավիճակների և էկոլոգիական աղետների գոտիները.

15) կենսական նշանակության ջրհավաք ավազանների և գերխոնավ տարածքների քայքայման սպառնալիքները, և ջրաէկոհամակարգերի վրա վնասակար ազդեցությունների կանխմանն ուղղված համապատասխան միջոցառումները:

Deleted: Կառավարությունը ջրի ազգային ծրագրի կատարման, ինչպես նաև դրանում առաջարկվող փոփոխությունների մասին ամենամյա հաղորդում է ներկայացնում Ազգային ժողով՝ մինչև հաջորդ տարվա մայիսի 15-ը:¶

Formatted: Font: (Default) Calibri, 11 pt

Formatted: Font: GHEA Grapalat, 11 pt